ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/4

ք. Երևան 26.09. 2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մարզահամերգային համալիրի շենքի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջների ապահովման համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **10 000 000 (տասը միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30%-ի չափով, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

4.3 Վճարումն իրականացվում է պայմանագրով նախատեսված ծառայության արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց, Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ փորձաքննությունների դրական եզրակացությունների առկայության դեպքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկ ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել

է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի ապահովման և դրան կից վճարման պահանջագրի բանկային տվյալներին:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011059640 ՀՎՀՀ 02565827	«Հայնախագիծ» ԲԲԸ ք. Երևան, Չարենցի 1 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 2470100038500000 ՀՎՀՀ 01503291
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Գ. Եղիազարյան (ստորագրություն)	_____ Գ. Ազիզյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
26. 09 . 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/4 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը**
1	71241200/74	ՀՀ դրամ	10 000 000	1	ՀՀ	պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 98 օրացուցային օր՝ համաձայն Հավելված N 1.1-ի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.	**Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը**	Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մարզահամերգային համալիրի շենքը տեղակայված է ք.Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի, 1 շենք հասցեում, կառուցվել է 1983 թվականին:Նախագծվել է անհատական նախագծի համաձայն, որի հեղինակը հանդիսանում է «Հայնախագիծ» ՓԲԸ-ն: Ըստ ՀՀ կառավարության 03.03.2022թ N250-Լ որոշմամբ հաստատված միջոցառումների I փուլի՝ 2023թվականին կատարված մասնաշենքերի հետազննման և անձնագրավորման արդյունքների (կտրամադրվեն նախագծողին)՝ կառույցի ծավալահատակագծային լուծումները բավարար չափով չեն ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար շահագործման մատչելիություն, ուստի ենթակա են վերանախագծման: Վերանախագծումը նախատեսվում է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի մոտ 2025 թվականի հուլիսի 11-ին կայացած «Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովի կազմակերպման հանձնաժողովի» առաջին նիստի հանձնարարականի (նիստի N ՂԱ/12-2025 արձանագրության 2-րդ կետի 7-րդ ենթակետ) շրջանակներում:
2.	**Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը**	- Նախատեսվում է - ուսումնասիրել 2023թ հետազննման արդյունքները, համադրել գոյություն ունեցող շենքերի ու շինությունների փաստացի իրավիճակի հետ, ըստ անհրաժեշտության նախատեսել նաև լրացուցիչ ինժեներական հետազննում, - ներկայացնել վերլուծական նյութեր նախագծման աշխատանքների արդյունավետ կազմակերպման վերաբերյալ, - նախագծային փաստաթղթերի մշակում՝ առաջնահերթ էսքիզային տարբերակով՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն ապահովող միջոցառումների գրաֆիկական նկարագրությամբ՝ թեքահարթակներ, բազրիքներ, լուսավորություն, երկու և ավելի հարկայնության դեպքում վերհանսարքեր և վերելակներ (բեռնատար, մարդատար), ինչպես նաև

		այլ միջոցառումներ, տեխնիկական միջոցներ ու սարքեր, կահավորանք՝ նախատեսված օրենսդրությամբ, - ըստ անհրաժեշտության՝ նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության և օդորակման, սառնամատակարարման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման, էներգախնայողության/ համակարգերի մասնակի կամ ամբողջական վերակառուցում, արդիական ներքին հարդարում, - նախագծային լուծումներն ուղեկցել ըստ անհրաժեշտության երկրաշարժադիմացկունության մասնակի միջոցառումներով, - նախագծային լուծումները համալրել շինարարական արտադրության կազմակերպման արդի պահանջներով, - նախագծման ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ **Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.** - օբյեկտի մատչելիության պահանջների ապահովման միջոցառումների նկարագրությունը և ժամանակակից պահանջներին համապատասխան ընդունված ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումները, կիրառվող սարքավորումներն ու տեխնիկական միջոցները, ինչպես նաև դրանց հիմնավորումները: - մատչելիության պահանջների ապահովման քանակական հիմնավորումները՝ ներառյալ մատչելի նստատեղերի, սանհանգույցների, սպասարկման գոտիների, ավտոկայանատեղիների և այլնի քանակը՝ համամասնորեն հանդիսատեսի ընդհանուր թվին, - մատչելիության նախագիծ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված թեքահարթակների, վերելակների, սանհանգույցների, տարահանման և տեղաշարժման ուղիների, այլ հարմարեցված տարրերի (տակտիլ, ձայնային, տեսողական և այլ) գծագրեր, սարքավորումների մոնտաժման սխեմաներ, այլ անհրաժեշտ գծագրական նյութեր և մասնագրեր, - շրջակա տարածքի բարեկարգման նախագիծ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ ֆունկցիոնալ գոտիների ապահովմամբ՝ հասանելի անցուղիներ, մոտեցումներ, կայանատեղիներ և այլն, - ներքին և արտաքին հաղորդակցուղիների մասնակի կամ ամբողջական կառուցման (վերակառուցման) նախագիծ՝ ըստ անհրաժեշտության, - ներքին հարդարում՝ հատուկ կահավորանք, խելամիտ հարմարեցումներ, ֆիզիկական բարելավված միջավայր, - այլ ենթակառուցվածքներ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների,
3.	**Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ**	**Հիմնավորում՝** - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի մոտ 2025 թվականի հուլիսի 11-ին կայացած «Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովի կազմակերպման հանձնաժողովի» առաջին նիստի հանձնարարական (նսիտի N ՂԱ/12-2025 արձանագրության 2-րդ կետի 7-րդ ենթակետ), - ՀՀ կառավարության 28.08.2025թ. N 1234-Ն որոշմամբ նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մարզահամերգային համալիրի շենքի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջների ապահովման համապատասխան (նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության ծառայություններ)» ծրագրի համար: **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ** - հողհատկացման հիմքեր

		- ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ, - շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացություններ - արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի եզրակացություն - ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն(-ներ), - նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), - հանույթ, - չափագրություններ, - ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, մշակույթ, արտակարգ իրավիճակներ): Ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներում պարտադիր ներառման ենթակա են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ նախատեսված հիմնական պահանջները՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ միջոցառումների նախատեսման նորմատիվ պահանջները: **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** - <Քաղաքաշինության մասին> օրենք - <Քաղաքացիական պաշտպանության մասին> օրենք - <Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին> օրենք - <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> օրենք - <Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին> օրենք - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 04-Ն հրաման**, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 102-Ն հրաման**, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 95-Ն հրաման,** - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերը հաստատելու **N 253-Ն հրաման**, - - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի «ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում.Հիմնական դրույթներ» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 87-Ն հրաման,** - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական հորմերը հաստատելու մասին **N 56-Ն հրաման,** - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 83-Ն հրաման,** - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 78-Ն հրաման,** - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 80-Ն հրաման,** -ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 103-Ն հրաման,**

		- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, - «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, - ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» **N 1504-Ն որոշում**, - ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 526-Ն որոշման Կարգի** 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ, - ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> **N596-Ն որոշում** - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի <Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի նոյեմբերի 25-ի N168 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին> N282-Ն հրաման - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի փետրվարի 9-ի <Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների կառուցման (այդ թվում՝ վերակառուցման, հիմնանորոգման, արդիականացման, վերազինման, ընդլայնման, քանդման կամ ապամոնտաժման) աշխատանքներ կատարողների և տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցողների նկատմամբ՝ շինարարական աշխատանքների ընթացքում նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանման, հայտնաբերված խախտումների և թերությունների համար պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ մեթոդական խորհրդատվության դրույթները հաստատելու մասին> N09-Ա հրաման
4.	**Նախագծման փուլերը**	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում **«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** փուլերով (այդ թվում՝ **Էսքիզային նախագիծ՝** ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով)

5.	**Նախագծի կազմը**	**«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** **<u>փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>** 1. **Ընդհանուր բացատրագիր** 2. **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) 3. **Ճարտարապետաշինարարական մաս** - Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/ - Եռաչափ մոդելավորում (3D) **Կոնստրուկտիվ մաս** - Կոնստրուկտիվ լուծումներ, - կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն 4. **Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) - Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն 5. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 6. Շինարարության կազմակերպման նախագիծ 7. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ 8. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ: 9. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ: **11.**Անձնագրային տվյալների ամփոփում (ըստ անհրաժեշտության անձնագրի լրամշակում) **Համաձայնեցումներ** *<u>Նախագծի միջանկյալ գրավոր համաձայնեցում</u>* 1. **Համայնքի ղեկավարի,** 2. **ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,** 3. **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության,** 4. **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության,** 5. **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության,** 6. **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ:**
6.	**Այլ պահանջներ**	***<u>Եզրակացություններ</u>*** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում 1. **Նախագծողի կողմից** ըստ անհրաժեշտության լրացուցիչ ինժեներական հետազննության և այլ եզրակացությունների ձեռքբերում, 2. **Նախագծողի կողմից** նախագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում **Փորձաքննություններ** Որպես բարձր ռիսկայնության **(IV կատեգորիայի)** դասակարգում ունեցող օբյեկտ՝ 1. **Պատվիրատուի կողմից՝** քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացության ձեռքբերում **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** - նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ, - նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ, - էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

		Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:
7.	**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ**	**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)** Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից՝ **98 օրացուցային օր**՝ ըստ կից ներկայացված օրացուցային գրաֆիկի: **<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>** Ըստ անհրաժեշտության ***պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»),*** նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011059640
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

_____ Գ. Ազոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
26 09 . 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/4 պայմանագրի

Օրացուցային գրաֆիկ
Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մարզահամերգային համալիրի շենքի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջների ապահովման համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում

Հ.հ	ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 14 շաբաթ կամ 98 օրացուցային օր)						
		1-2	3-4	5-6	7-8	9-10	11-12	13-14
1.	Ելակետային փաստաթղթերի և ելակետային տվյալների հավաքագրում՝ տարածքի ինժեներաերկրաբանական և գոյություն ունեցող շենքերի տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություններ, ինժեներական ենթակառուցվածքի համակարգերին միանալու նախագծման նախնական պայմաններ (ելակետային տվյալներ կամ տեխնիկական պայմաններ, ՃՀԱ դիմում) (ՀՀ կառ.19.03.2015թ N596-Ն որոշում)							
2.	Տեխնիկական բնութագրի (առաջադրանքի) հիման վրա Էսքիզային նախագծի մշակում, այդ թվում նախագծի եռաչափ մոդելավորում							
3.	Օբյեկտի մատչելիության պահանջների ապահովման միջոցառումների նկարագրությունը, կիրառվող սարքավորումներն ու տեխնիկական միջոցները, ժամանակակից պահանջներին համապատասխան ընդունված ճարտարապետական և կոնստրուկտիվ, ներքին ինժեներական հաղորդակցուղիների նախագծային լուծումների մշակում, համաձայնեցում պատվիրատուի հետ							
4.	<Նախագիծ> և <Աշխատանքային փաստաթղթեր> փուլերով նախատեսված աշխատանքների ամփոփում, լրակազմի մշակում, համաձայնեցում պատվիրատուի և շահագրգիռ մարմինների հետ							
5.	Քաղաքաշինական պարզ փորձաքննության արդյունքներով Նախագծի լրակազմի ամփոփում (ըստ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների Նախագծի լրամշակում)							

* Ներկայացված աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի այլ առաջարկ ունենալու պարագայում, մասնակիցը, հայտի ներկայացման փուլում, ներկայացնում է նոր օրացուցային գրաֆիկ՝ փոփոխելով միայն առանձին տեսակի աշխատանքների կատարման ժամկետները՝ պահպանելով բոլոր աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր տևողությունը: Օրացուցային գրաֆիկը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011059640
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

_____ Ա. Ազիզյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
26. 09. 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/4 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/74	Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մարզահամերգային համալիրի շենքի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջների ապահովման համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	10 000 000	10 000 000	10 000 000	**10 000 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011059640
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
26 . 09 . 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/4 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
26. 09 . 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/4 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
26. 09 . 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/4 պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

Արդշինբանկ ՓԲԸ

Վճարման հանձնարարական N250922396040001 137_3043187

22/09/25 22/09/25 16:09:54 F209

Դեբետի հաշիվ	2470100038500000 / 30202	Գումար և արժույթ
Վճարողի բանկ	AM24700 AM24700 Արդշինբանկ ՓԲԸ	1,000,000.00 AMD
Վճարողի ԱԱՀ կամ անվանում	ՀԱՅՆԱԽԱԳԻԾ ԲԲԸ	
ՀՎՀՀ/ՀԾՀ	1801503291	
Հիմնական պարտ ԱԱՀ կամ անվանում	ՀԱՅՆԱԽԱԳԻԾ ԲԲԸ	
Հիմնական պարտ ՀՎՀՀ/ՀԾՀ		
Կրեդիտի հաշիվ	900008000664	
Ստացող (Շահառուի) բանկ	AM90000 ՀՀ էկոնոմ.եվ ֆինանս.նախարարություն	
Ստացողի (Շահառուի) ԱԱՀ կամ անվանում	ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
Ստացողի (Շահառուի) ՀԾՀ		
Գումարը և արժույթը բառերով	Մեկ միլիոն ՀՀ դրամ	
Վճարման նպատակ	ՀՀՔԿՀՄԱԽԾՁԲ25/4 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագրի ա պահովում	
Միջնորդավճար	0.00	
Շահառուին վճարման	22/09/25	

Կ.Տ. Վճարողի ստորագրություն 1._____ 2._____

Կատարողի ստորագրություն ը ԱԱՀ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
«ARDSHINBANK» CJSC
02566492 MOBILE